ՀՏԴ 168.522

Ա.Հ. ՄԵԼԻՔՅԱՆ

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒՄԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Դիտարկվում են համընդհանուր կրթական ներկայիս ճգնաժամին բնորոշ մի շարք խնդիրներ, և հիմնավորվում է այն թեզը, որ հումանիտար գիտություններն ու արվեստը կարևոր նշանակություն ունեն կրթական բոլոր մակարդակների համար: Նշվում է, որ կրթությունը չի կարող դառնալ տնտեսական աճի ու շահույթ ստանալու գործիք: Տնտեսական աճը ոչ միշտ է նպաստում կյանքի որակի բարելավմանը, իսկ հումանիտար գիտությունների ու արվեստի դերի անտեսումն անխուսափելիորեն բացասաբար է ազդում քաղաքացիների կյանքի որակի վրա և սպառնալիք է ժողովրդավարական պետության բարգավաճման համար:

Առանցքային բառեր. հումանիտար գիտություններ, արվեստ, տնտեսական աճ, կրթություն, ճգնաժամ, հասարակություն, ժողովրդավարություն, քաղաքակրթություն:

Կրթության ճգնաժամի հիմնական բաղադրիչները. «Այսօր պատմությունը հայտնվել է զարգացման այնպիսի փուլում, երբ բարոյական, ներդաշնակ մարդը, հաճախ նույնիսկ անգիտակցաբար, զիջում է ճանապարհը իր առջև սահմանափակ խնդիրներ դրած գործարարին: Այս գործընթացը, համադրված լինելով գիտությունների անհավանական հաջողությունների հետ, հասել է զգալի ծավալների և ձեռք է բերել ազդեցիկ իշխանություն՝ խաթարելով բարոյական մարդու ինքնավստահության և ներդաշնակության հիմքերը, իսկ նրա մարդկային որակները քողարկվում են անհոգի կազմակերպությունների ստվերում» [1, 45]:

Հումանիտար գիտություններն ու արվեստի տարբեր ճյուղեր հսկայական դերակատարություն ունեն մարդկության պատմության, ազատությունների ընդլայնման ու նույնիսկ ժողովրդավարության կայացման ու զարգացման գործում, սակայն այսօր էլ ծնողներին մտահոգում է գրականության ու արվեստի հանդեպ իրենց զավակների ունեցած համակրանքը: Գրականությունն ու փիլիսոփայությունը փոխեցին աշխարհը, բայց բոլոր երկներում ծնողներն ավելի շատ շահագրգռված են, որ իրենց երեխաները ձեռք բերեն ֆինանսական միջոցների ճիշտ տնօրինման համար անհրաժեշտ գիտելիքներ, և ծնողների մեծամասնությանը չի հուզում իրենց երեխաների մեջ հումանիտար տարրական գիտելիքների բացակայության խնդիրը:

Այսօր կարելի է հստակ արձանագրել կրթական ու հասարակական ոլորտներում առկա հումանիտար գիտությունների ճգնաժամի փաստը՝ նշելով, որ բազմաթիվ երկրներ, հետապնդելով տարատեսակ նյութական, ֆինանսական, տնտե-

սական շահեր, ոչ միայն ստորադասում են հումանիտար ոլորտը, այլև աստիճանաբար ոչնչացնում են այդ որոլտին բնորոշ ունակություններն ու ավանդույթները: Արվեստն ու հումանիտար գիրություններն ամենուրեք անտեսվում են, ինչն էլ իր հերթին խաթարում է հասարակության ու ժողովրդավարության հիմնասյուները: Ականավոր փիլիսոփաները, հմուտ ուսուցիչներն ու փոձառու գիտնականները դարեր շարունակ պնդել են, որ հումանիտար գիտությունները, գրականությունը, փիլիսոփայությունն ու արվեստը երեխաների ու երիտասարդների մեջ ձևավորում են քննադատական մտածողության ունակություններ, որոնք էլ իրենց հերթին մարդու մեջ զարգացնում են ինքնուրյուն որոշումներ կայացնելու կարողություն և հետադիմական ավանդույթների ու հեղինակությունների նկատմամբ չափավոր դիմադրության հմտություն: Այն ուսանողները, ովքեր ուսումնասիրում են գրականություն կամ փիլիսոփայություն, կարողանում են իրենց պատկերացնել ու նույնիսկ դնել ուրիշի տեղը, այսինքն՝ հասկանալ մարդուն, իսկ այս ունակությունն ընկած է հաջողված ժողովրդավարական հասարակության հիմքում՝ արթնացնելով և զարգացնելով մարդկանց մեջ կարեկցանք, խիղճ, ներողամտություն և շատ այլ օգտակար որակներ: Ներգրավելով բազմաթիվ մանկավարժական, հասարակագիտական, քաղաքագիտական, փիլիսոփայական տեսություններ, կարծիքներ, փորձեր և ենթադրություններ՝ անհրաժեշտ է արդեն այսօր առաջարկել մարդկությանը այնպիսի կրթական մոդելներ, որոնք կնպաստեն մարդկային պոտենցիալի շարունակական բացահայտմանն ու զարգացմանը՝ հանուն մարդու ազատության, ժողովրդավարական արժեքների հաստատման ու բարձր քաղաքակրթության գոյության:

Կրթության ու ժողովրդավարական արժեքների հաստատման փոխկապակցվածությունը. «Մարդկության առաջընթացն ու նվաճումները հաստատում են այն պարզ համոզմունքը, որ խելամիտ մեքենան ի զորու է մի շարք գործեր կատարել շատ ավելի լավ, քան մարդը: Միևնույն ժամանակ անտեսվում է կրթության հիմնական արդյունքը՝ իմաստավորված կյանք վարելու մարդու ունակությունը» [2, 178]:

Արվեստն ու հումանիտար գիտություններն իրենց խաղային բաղադրիչներով չափազանց օգտակար են ոչ միայն ուսանողների, այլ նաև երեխաների համար: Այդպես երեխաները սովորում են շփվել միմյանց հետ՝ չվերահսկելով խաղի ընթացքը, արտահայտելով իրենց զարմանքը, բավարարելով հետաքրքրասիրությունը, հաղթահարելով խոցելիության բարդույթը, հրճվելով հրաշքին հավասարազոր դրվագներով: Այդ ամենն անտեսված է այսօրվա բավականին տրավմատիկ պահանջներով ու ակնկալիքներով լի կրթական գաղափարախոսությունում:

Հումանիտար գիտությունների ներկայացուցիչները բազմիցս նշել են, որ կարեկցելու ունակության բացակայությունը զարգացնում է այնպիսի կործանարար զգացմունքներ, ինչպիսիք են՝ հակակրանքը, թշնամանքը, նախանձն ու ամոթի զգացմունքը, որոնք վկայում են մարդու անզորության ու անօգնական վիճակի մասին: Եթե հասարակարգը հիմնվում է այն գաղափարի վրա, ըստ որի ցանկացած խնդրի լուծման հիմնական պատասխանատուն որևէ պետական կամ հասարակական մարմին է, իսկ մարդիկ ուղղակի պարտավոր են կատարել լոկ իրենց պարտականությունները, ապա կստացվի ժողովրդավարական հասարակարգի ճիշտ հակառակ պատկերը: Այսինքն, եթե ժողովրդավարական պետության հասարակության անդամները չունենան միմյանց նկատմամբ բարիդրիացական տրամադրվածություն, կարեկցելու ու հասկանալու պատրաստակամություն, ապա այդ հասարակարգը անխուսափելիորեն կվերափոխվի ու «կիիվանդանա»:

Միաժամանակ, պետք է նկատի ունենալ, որ ինքնին հասարակության կրթվածության աստիճանը տնտեսական զարգացման երաշխավոր հատկանիշներից ամենակարևորը չէ: Տենտասական աճը միշտ չէ, որ նպաստում է կյանքի որակի բարելավմանը: Ուստի հումանիտար գիտությունների նկատմամբ քամահրանքը վտանգավոր է մեր ընդհանուր կյանքի որակի բարելավման ու ժողովրդավարական բարքերի հաստատման տեսանկյունից:

Այսուհետ բոլոր կրթական ծրագրերը պետք է հաշվի առնեն ոչ միայն տնտեսական կամ նեղ մասնագիտական գործառույթներ, այլև կարևորեն հումանիտար գիտությունների խիստ անհրաժեշտությունը անհատի, հասարակության ու պետության շարունակական զարգացման գործում: Դինամիկ աշխարում, մասնագիտական հատկանիշներից զատ, խիստ կարևորվում են նաև հաղորդակցվելու կարողությունները, նախապես համաձայնեցված խաղի կանոններին համահունչ գործելաոճը, ինքնուրյուն մտածելու ունակությունները, վստահությունը և այլն:

Արդի կրթական ճգնաժամի առանձնահատկությունները. «Նյութական բարիքներից օգտվող մարդուն պետք է սովորեցնել, թե ինչպես պաշպանվել նյութապաշտական արժեքների պարտադրանքներից: Եթե մարդն այնքան թույլ է, որ պատրաստ է հանուն սեփական կարիքների բավարարման զոհ գնալ նյութական աշխարհի հարվածներին ու գայթակղություններին, ուրեմն՝ սահմանափակում է իր հոգևոր պահանջմունքները և աստիճանաբար իրեն մղում է ինքնասպանության» [3, 211]:

Այսօր մենք գտնվում ենք կյանքի բոլոր ոլորտներն ընդգրկող այնպիսի խոր ճգնաժամի մեջ, որն ունի համաշխարային տարածում ու նշանակություն: Խոսքը չի վերաբերում է 2008թ. սկիզբ առած տնտեսական ճգնաժամին: Այդ

ժամանակ հասարակական ու պետական գործիչները բավականին արդյունավետ արձագանքեցին ստեղծված տագնապալի իրավիճակին ու իրենց գործողություններով հիմնականում կանխեցին շուկաների ու ֆինանսական հաստատությունների անկառավարելի ու քաոսային փլուզման վտանգը: Այնուամենայնիվ, այդ տեսակի տնտեսական ճգնաժամերը, ունենալով բավականին աղետալի հետևանքներ, չեն կարող համեմատվել շատ ավելի խորքային ճգնաժամային երևույթների հետ, որոնք տեղի են ունենում կրթական ոլորտում: Պետք է հաշվի առնել, որ կրթական ոլորտի ճգնաժամը հանդիսանում է սպառնալիք ոչ միայն տնտեսության անխափան գործունեության և առաջընթացի համար, այլև ամբողջ հասարակարգի մշակույթի ու նույնիսկ քաղաքակրթության համար: Փաստորեն կարող ենք այսօր արձանագրել համաշխարային կրթության խորքային ու քողարկված լայնածավալ ճգնաժամի մասին:

Բոլոր այն ժողովուրդներն ու երկրները, որոնց գաղափարախոսության հիմքում ընկած է քրիստոնեական քաղաքակրթությանը բնորոշ բարոյական ու իրավական մշակույթը, որոնք այս կամ այն չափով հետևում են քրիստոնեական արժեքներից բխող մերօրյա հիմնական հումանիտար գաղափարներին (խոսքը մարդու իրավունքների ու ժողովրդավարության արժեհամակարգի մասին է), գտնվում են խոր կրթական ճգնաժամի մեջ: Այդ ճգնաժամը պայմանավորված է շատ պարզ հանգամանքով. կրթական ծրագրերը հիմնականում առաջարկում են ուղղություններ, որոնք խոստանում են բարձր ու արագ շահութաբերություն, նյութական բարեկեցություն, որոնք էլ իրենց հերթին ապահովում են նաև տնտեսական ու արդյունաբերական առաջընթաց, բայց անտեսում ու արժեզրկում են մեր քաղաքակրթության հիմնական արժեքները: Եթե այս կարգի միտումները չփոխվեն, ապա կրթական համակարգը շուտով կսկսի թողարկել օգտակար մեքենաների նմանվող շրջանավարտներ, այլ ոչ թե լիակատար քաղաքացիներ, որոնք ունակ են ինքնուրույն մտածելու, քննադատելու հետադիմական հայացքները, հասկանալու, կարեկցելու ուրիշին: Այսպիսով, մեր քաղաքական, հասարակական ու բարոյական արժեքների ապագան խիստ մտահոգիչ է ու անորոշ:

Քաղաքացիների դաստիարակության բարոյահոգեբանական խնդիրները. Իսկ ինչպիսի՞ն է արդի համընդհանուր ճգնաժամի բնույթը: Գործնականում բոլոր երկրները կրճատում են դպրոցներում, քոլեջներում ու համալսարաններում հումանիտար գիտություններին և արվեստին առնչվող առարկաների դասավանդման ժամաքանակը: Քաղաքական գործիչները հասարակագիտական գիտելիքների արժեքն ու դերը թերագնահատում են, նույնիսկ այն համարելով անիմաստ ու ավելորդ կամ յուրատեսակ շռայլություն: Երբ երկիրն իր ամբողջ ուժերն ուղղորդում է գլոբալ մրցակցության մեջ իր ուրույն տեղը զբաղեց-

նելու խնդրի լուծմանը, պարզվում է, որ պետությունը այլևս իրեն չի կարող թույլ տալ ոչ արդիական գիտելիքների համար միջոցներ տրամադրելու շռայլություն: Հումանիտար գիտելիքները հետզհետե կորցնում են իրենց դիրքերը կրթական ծրագրերում ու արժեզրկվում ծնողների ու երեխաների կողմից: Նույնիսկ այն հումանիտար գիտությունները, որոնք անմիջականորեն առնչվում են բնագիտական խնդիրների հետ և ազդում են մտածողության ձևավորման վրա, զիջում են իրենց դիրքերը՝ ի նպաստ օգտակար ու կարճ ժամանակում շահույթ խոստացող ուսումնական ծրագրերին:

Կրթական այս ճգնաժամն իրական սպառնալիք է մարդկության համար, բայց, ավաղ, մենք դեռ չենք գիտակցում դրա բոլոր աղետալի հետևանքները: Մենք շարունակում ենք ապրել սովորական պատկերացումներով, կարծես ոչինչ տեղի չի ունեցել, չնայած որ յուրաքանչյուրս ընդունում է կրթական ոլորտում առկա անդառնալի փոփոխությունների ցավալի փաստը: Մեր ապագան լիովին պայմանավորված է այս տեսակ աննկատ գործընթացներով, որոնք անխուսափելիորեն սահմանափակելու են մեր իրավունքներն ու ազատությունները: Երբ վերլուծում ենք տարբեր երկներում կրթությանն առնչվող գործընթացներն ու դրանց վերաբերող տեսակետները, համոզվում ենք, որ ամբողջ աշխարհում տեղի են ունենում միանման գործընթացներ: Օրինակ, ԱՄՆ-ում կրթական քաղաքականության հեռանկարներին վերաբերող մի շարք փաստաթղթերում, նշվում է, որ անհրաժեշտ է, հաշվի չառնելով մարդու սոցիալական կարգավիճակը, բոլորին տրամադրել լիակատար կրթություն ստանալու համար անհրաժեշտ հավասար պայմաններ: Բայց, միևնույն ժամանակ, նշվում է, որ այդ կրթությունը պետք է նպաստի գործազրկության կրճատմանն ու շահավետ լինի երիտասարդների համար, ուստի կարիք չկա ծանրաբեռնել ծրագրերը հումանիտար առարկաներով և այլն:

2004թ. Հնդկաստանում՝ Ռաբինդրանաթ Թագորի կենտրոնում, տեղի է ունեցել մեծ կոնֆերանս, որի մասնակիցները համակարծիք էին, որ աշխահրում հաղթել է մի կրթական գաղափար, համաձայն որի կրթության հիմնական նպատակը ոչ թե որակյալ մտածողությունը, ստեղծագործական հմտություններն ու բարոյական արժեհամակարգի հաստատումն է, այլ՝ շահութաբերությունը:

Կրթական ծրագրերը խթանում են շահույթ հետապնդելու համընդհանուր միտումը. 2005թ. ԱՄՆ-ում՝ Չիկագոյի փորձարարական դպրոցում, որտեղ սովորել են Բարակ Օբամայի դուստրերը, ուսուցիչների մեծ հավաք էր գումարվել: Այնտեղ խոսում էին Սոկրատեսի, Դյուիի, Թագորի ու մի շարք այլ նշանավոր մտավորականների, մանկավարժների՝ կրթական ոլորտին վերաբերող գաղափարների մասին: Բայց հանկարծակի պարզվեց, որ ծնողները դժգոհում են

ուսումնական ծրագրերի մեջ հումանիտար առարկաների քանակից՝ պահանջելով կրճատել դրանք և փոխարինել ավելի օգտակար առարկաներով, որոնք իրենց հերթին կարող են ապահովել աշակերտների ֆինանսական բարեկեցությունը: Այսպիսով, ծնողները փորձում են փոխել դպրոցների ու համալսարանների կրթական քաղաքականությունը՝ ի շահ այն առարկաների դասավանդման, որոնք խոստանում են գործնական արդյունքներ, այսինքն՝ դրամ վաստակելու կարողություններ [4, 345]:

Մի շարք զարգացած ու զարգացող երկրներում նույնպես կարելի է արձանագրել հումանիտար գիտությունների նկատմամբ հետաքրքրության նվազման միտումներ: Թվում է, թե ամբողջ աշխարհն ունի միայն մեկ մտահոգություն. ապահովել մարդկանց նյութական բարեկեցությունը՝ անտեսելով մյուս բոլոր երևույթներն ու բնագավառները, որոնք չեն խոստանում նյութական շահավետություն:

Միաժամանակ, մոռացության է մատնվում հոգու գոյության փաստը, այն, թե որքան կարևոր է միտքը ծավալալել, արտահայտել հոգևոր դաշտում, մարդու և աշխարհի, մարդկանց փոխհարաբերությունների նուրբ դաշտում: Հաղորդակցվելով մարդկանց հետ, անհրաժեշտ է հաշվի առնել նրանց ամբողջական հոգևոր պատկերը, այլ ոչ թե մարդուն ընկալել զուտ որպես տարբեր նպատակներ իրագործելու և խնդիրներ լուծելու համար անհրաժեշտ գործիք: «Հոգի» հասկացությունը շատերի համար ունի զուտ կրոնական հնչողություն, սակայն կրթական ու հասարակական խնդիրների համատեքստում այն ընկալվում է որպես մարդու ներաշխարհի ամբողջական բնութագիր: Փիլիսոփաները և, առհասարակ, մտավորականները գործածելով հոգի բառը, կարևորում էին այս հասկացության իմաստը, այսինքն՝ այն, ինչը մարդուն մարդ է դարձնում: Նրանք միջանձնային հարաբերությունները շատ ավելի բովանդակալից են համարում, քան զուտ շահադիտական կամ գործնական բնույթի հարաբերությունները: Եթե ի վիճակի չենք ուրիշի մեջ մի ամբողջական աշխարհ տեսնելու՝ նրան հատուկ ներաշխարհով, ապա մեր հասարակական կյանքի հիմքերը շատ արագ կքայքայվեն, մարդասիրական ու ժողովրդավարական արժեքները անկում կապրեն: Մեր հասարակարգին բնորոշ քրիստոնեադեմոկրատական արժեքները հիմնված են փոխադարձ հարգանքի վրա, դիմացինի շահերը, հետաքրքրությունները, զգացմունքները խնայելու պատրաստակամության վրա:

Պետության ու կրթական համակարգի հարաբերությունների մասին. Տնտեսական աճի ցուցանիշների ու շահույթի վրա կենտրոնացած լինելով, պետությունն ու պետական գործիչներն անտեսում են կրթության զարգացմանը նպաստող գործողություններն ու ոլորտին անհրաժեշտ ներդրումների կարևո-

ությունը: Հետաքրքրված լինելով միայն շահույթ խոստացող տնտեսական ծրագրերի իրագործմամբ և փաստորեն անտեսելով աշխարհում արձանագրվող կրոնական ու միջազգային հակամարտությունների աճի միտումները, պետությունները խարխլում են այն քաղաքակրթության ու արժեհամակարգի հիմքերը, որոնց վրա հիմնված են մերօրյա բոլոր նվաճումները՝ տեխնոլոգիական, մշակութային, քաղաքական, հումանիստական և այլն: Պետական ու քաղաքական շատ գործիչներ այսօր համոզված են, որ մարդկության ու հասարակության զարգացմանն աջակցող կրթական մոդելը պետք է հնարավորինս ներառի բնագիտական ու տեխնիկական կրթական ծրագրեր: Այնուամենայնիվ, չի կարելի չնկատել, որ հումանիտար գիտությունների ու խնդիրների անտեսման պարագայում մեր հասարակություններն ու երկրները երկարաժամկետ առումով կդառնան շատ ավելի խոցելի, իսկ մեր արժեհամակարգը կարող է բավականին արագ քայքայվել:

Երևակայության խրախուսումը՝ փիլիսոփայություն, գրականություն, արվեստ. «Այն մարդը, ով չի հետաքրքրվել գրականությամբ, պոեզիայով, երաժշտությամբ, գեղանկարչությամբ, ով չի վերապրել վեհ զգացմունքային ապրումներ, ընդմիշտ կմնա հոգևոր առումով մի յուրատեսակ հրեշ: Հանդիպելով այդպիսի մարդկանց, ես միշտ նկատում եմ իրենց բնորոշ մի արատ՝ սառնասրտություն: Հնարավոր չէ հոգով ու մտքով հասունանալ, եթե մարդը մնացել է անհաղորդակից արվեստին, գրականությանը: Մշակույթին անհաղորդակից մարդկանց դիմագծերը, նույնիսկ ձայնն էլ է այլանդակ: Հոգով և մտքով զարգացած մարդուն կարելի է ճանաչել ձայնի տոնայնության շնորհիվ» [5, 265]:

Նշենք այն հատկությունները, հմտություններն ու որակները, որոնք մարդիկ ի զորու են ձեռք բերել հումանիտար գիտությունների հետ առնչվելիս կամ ուսումնասիրելիս.

- հանրային շահերը անձնական շահերից գերադասելու կարողություն,
- լինել ոչ միայն պետության քաղաքացի, այլ նաև զգալ ինքդ քեզ համայն մարդկության անբաժանելի մասնիկ,
- ձեռք բերել քննադատական ու անկողմնակալ մտածողության որակներ,
- անկեղծորեն կարեկցել ուրիշին, հասկանալ, մտնել նրա դրության մեջ և այլն:

Կրկնենք, որ չափազանց կարևոր է հստակ տարանջատել երկու տեսակի կրթական մոդելներ. կրթություն, որը պատրաստում է շահույթ հետապնդող մասնագետներ, և կրթություն, որի հիմքում ընկած է քաղաքացու համապարփակ դաստիարակման գաղափարը: Միանշանակ կարելի է ասել, որ հումանիտար գիտությունները, արվեստն ու մշակույթը՝ որպես կրթական գործըն-

թացի մի մաս, չափազանց կարևոր են և՛ դպրոցում, և՛ քոլեջներում, և՛ համալսարաններում դասավանդելու համար: Անշուշտ, վերոհիշյալ պնդումները չեն նշանակում, որ պետք է անտեսել բնագիտական, ճարտարագիտական գիտությունները կամ մասնագիտական առարկաները, բայց չափազանց կարևոր է խուսափել այն արատավոր սովորույթից, որով անհիմն կրճատվում ու վարկաբեկվում են եկամուտ չխոստացող գիտությունները և ուսումնական առարկաները: Խորքային առումով ու նպատակային խնդիրների համատեքստում բնագիտական, ինժեներական ու հումանիտար գիտությունները միտված են նույնանման նպատակների իրագործմանը՝ մարդկանց վարժեցնել անկաշկանդ ու քննադատական մտածողության կանոններին, բարձրացնել վառ երևակայության դերը գիտության զարգացման մեջ, պատրաստ լինել հասկանալ, կարեկցել մեր ընկերներին, համաքաղաքացիներին, օժանդակել համայն մարդկության բարօրությանը այնքանով, որքանով ի զորու ենք: Այսպիսով, հաշվի առնելով գիտությունների միասնականությունը, պետք է համանման ոգով կազմակերպել մեր կրթական համակարգը:

Սոկրատական մանկավարժության կարևորությունը արդի ճգնաժամի լուծման համատեքստում. Աշխարհում բավականին հստակ գիտակցում են վերոհիշյալ խնդիրները, և փորձ է արվում շտկել իրավիճակը՝ և՛ մանկահասակ տարիքի, և՛ ուսանողական ուսումնական տարբեր պրոցեսների մեջ ներառելով սոկրատական ինքնավերլուծական մեթոդները, որոնք իրենց հերթին ուղղված են հումանիտար խնդիրների լուծմանը: Մենք պետք է գիտակցենք, որ կրթությունը չի կարելի սահմանափակել միայն կրթական օջախների պատերի ներքո, այլ անհրաժեշտ է հնարաորինս ընդլայնել կրթական միջավայրը՝ ներառելով երեխաների կամ ուսանողների ընտանիքները, նրանց մերձակա շրջապատը և այլն:

Կրթությունն անհրաժեշտություն է ոչ միայն քաղաքացիների կերտման ու դաստիարակության համար, այլև ապագա գործունեությունն ու կյանքը իմաստով լրացնելու համար: Այնուամենայնիվ, միայն հումանիտար գիտությունների ազդեցությամբ չէ, որ ստեղծվում են մարդկանց կյանքի ամբողջական պատկերը, նպատակները, ծրագրերը, քանզի մարդը շատ ավելի բարդ է ու անկանխատեսելի իր ազատության մեջ: Եթե մենք շարունակում ենք հավատալ, որ հասարակության ու պետության ապագան պայմանավորված են մարդկանց աշխարահայացքով ու համոզմունքներով, ապա կրթական համակարգը չի կարող անմասն մնալ ապագա պատասխանատու քաղաքացու կերտման գործընթացներից: Անշուշտ, մարդու վրա չափազանց մեծ ազդեցություն են ունենում նրա ազգային արժեքները, դասակարգային պատկանելությունը, բարեկեցության աստիճանը, ֆիզիկական առողջությունը, հիվանդությունները, սեռը և այլն: Եթե

մարդկային գործոնը հասարակական ու տնտեսական գործընթացների մեջ բարձր է, ապա կրթության ու հատկապես հումանիտար կրթության, դերակատարությունը ունենալու է առանցքային նշանակություն բոլոր տեսակի զարգացումների համար:

Կրթական համակարգը չի կարող լիակատար համարվել, եթե նա սպասարկում է միայն բարձր եկամուտներ ունեցող մարդկանց: Գրեթե բոլոր երկներում որակյալ կրթության մատչելիությունը հասարակության բոլոր անդամների համար դառնում է օրհասական: Այս խնդիրը արդիական է նույնիսկ հարուստ ու զարգացած երկրների համար: Իսկ աշխարհի շատ երկներում կրթություն ստանալու հնարավորությունից օգտվում է բնակչության հազիվ կեսը: Աղքատների, կանանց, գյուղացիների որակյալ կրթություն ստանալու իրավունքները ամբողջ աշխարհում բավականին սահմանափակ են: Երեխաները, ովքեր հաճախում են բարեկարգ դպրոցներ և ունեն բարձրագույն կրթություն ստանալու հեռանկար, շատ ցայտուն կերպով տարբերվում են այն երեխաներից, որոնք զրկված են այդ ամենից: Այս և շատ այլ խնդիրների լուծման համար մարդկությունը պետք է վերանայի առաջին հերթին կրթության գաղափարախոսությունը:

Հումանիտար կրթությունը ազգերի ու երկրների խաղաղ համագոյակցման համատեքստում. Հումանիտար գիտությունների ազդեցությունը բավականին կարևոր է նաև ազգերի ու պետությունների միջև բարիդրիացական ու հեռանկարային հարաբերություններ հաստատելու գործում: Տնտեսական գլոբալացման հետ մեկտեղ անհրաժեշտ է խորացնել միջմշակութային ու մարդկային շփումները, որոնք էլ իրենց հերթին ենթադրում են քաղաքացիների նախնական հումանիտար պատրաստվածություն: Մեր անձնական ու հասարակական կյանքի որակը պայմանավորված է նաև այնպիսի նուրբ հատկություններով, ինչպիսիք են հասկանալու կարողությունն ու միմյանց օգնելու պատրաստակամությունը:

Ժողովրդավարական պետությունների ազգային շահերը պահանջում են համապատասխան մշակույթի ու վստահության վրա հիմնված ուժեղ տնտեսություն ու վստահելի բիզնես միջավայր: Այս ամենը հաստատում է այն պարզ գաղափարը, որ բարեկեցության ու զարգացած տնտեսության հիմքում ընկած են մարդիկ, որոնց որակները նշանակալի չափով պայմանավորված են նաև հումանիտար կրթության ազդեցությամբ: Այսօր միայն շահույթ ստանալու սկզբունքի կարևորումը շատ արագ կարող է սպառել երկրի, հասարակության ու մարդու զարգացման ռեսուրսները: Տնտեսական բարձր ցուցանիշները անհրաժեշտ է զուգորդել ժողովրդավարական ինստիտուտների կայացմամբ, քանզի մարդ արարածը շահագրգռված է ոչ միայն սպառողական հեռանկարներով, այլ նաև ստեղծագործական ներուժի իրագործումով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Tagore Rabindranath**. Ashrama Education, shantiniketan: Basu, 1958. - 187 p.
2. **Тагор Дебендронатх**, Автобиография / Пер. с англ.; вступ. ст. и примеч. Т. Г. Скороходовой. - М.: ЦИИ ИВ РАН, 2007.
3. **John Dewey**, Democracy and Education. - New York, 1934. - 135 p.
4. **Michael Nussbaum**, Citizens of the World: A Classical Defense of Reform in Liberal Education. Cambridge, MA: Harvard University Press, 1997. -265 p.
5. Антология педагогической мысли / Сост. К. И. Салимова, Г.Б. Корнетов. - Т. 1. - М., 1988.

А.А. МЕЛИКЯН

РОЛЬ ГУМАНИТАРНОГО ОБРАЗОВАНИЯ В КОНТЕКСТЕ ПРЕОДОЛЕНИЯ ОБЩЕСТВЕННОГО И ПОЛИТИКО-ОБРАЗОВАТЕЛЬНОГО КРИЗИСОВ

Рассматриваются некоторые аспекты глобального кризиса в сфере образования и обосновывается тезис о важности гуманитарных наук и искусств для всех уровней образования. Развенчивается представление о том, что образование, прежде всего, представляет собой инструмент экономического роста и получения прибыли. Подчеркивается, что экономический рост не всегда ведет к улучшению качества жизни, а пренебрежение искусством и гуманитарными науками неизбежно снижает качество жизни граждан и ставит под угрозу процветание демократических государств.

Ключевые слова: гуманитарные науки, искусство, экономический рост, образование, общество, демократия, цивилизация.

A.A. MELIKYAN

THE ROLE OF HUMANITARIAN EDUCATION IN THE CONTEXT OF OVERCOMING THE CIVILIZATION CRISES

Some aspects of the global criss in the sphere of education, and the important role of humanities and arts for the education systems are considered. It is sometimes thought that education is an instrument of economic growth and getting profit. It is emphasized that economic growth does not always lead to the improvement of the life a quality, and neglecting art and humanities inevitably reduces the quality of life and is threat for prosperity of democratic states.

Keywords: humanities, art, economic growth, education, society, democracy, civilization.